



# ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԲԻՋՆԵՄԸ

## ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՇՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐԿԵՐԸ  
ԵՎ  
ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ

**ՀԱՐԿԱՅԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՇՈՒԹՅՈՒՆԸ**

**Հարկային կարգապահություն:** — Եր., Գար, 2007, 72 էջ:

Գրքույկն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման, հարկային հաշվառման, հարկային կարգապահության, հարկային կարգապահության խախտման համար սահմանված պատասխանատվության, ինչպես նաև հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների, հարկային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների, պարտականությունների և այլ հարցերի վերաբերյալ: Նախատեսված է բոլոր հարկ վճարողների համար

*Սույն գրքույկի ցանկացած մաս չի թույլատրվում որևէ կերպ փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	5
2.1. ՀԱՐԿԵՐ ՎՃԱՐԵԼԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	5
2.2. ՀՀ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ.....	5
2.3. ՀԱՐԿԻ, ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
2.4. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԵԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	10
3. ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒՅԹՈՒՆԸ .....	15
3.1. ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ .....	15
3.2. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ .....	18
3.3. ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.....	20
3.4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՆԵՐ .....	25
3.5. ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ .....	32
4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒՅԹՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ.....	39
4.1. ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ.....	39
4.2. ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒՅԹՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....	44
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՑԱՆԿ ՀՀ ԿԱ ՀՊԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՑԱՆԿ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐՆԵՐԻ.....	63

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մույն գրքույկն, ըստ էության, նախատեսված է բոլոր հարկ վճարողների համար՝ մեծ և փոքր, ներկա և ապագա, քանի որ այսօր հարկ վճարողների կարգապահության խնդիրը Հայաստանի Հանրապետության առջև կանգնած լրջագույն խնդիրներից մեկն է: Գրքույկն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում ինչպես ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման, հարկային հաշվառման, հարկային կարգապահության, հարկային կարգապահության խախտման համար սահմանված պատասխանատվության, այնպես էլ հարկային մարմնի, վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների, հարկային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ: Գրքույկի վերջում ընդգրկված հավելվածներում կարելի է գտնել հարկային տեսչությունների և վճարումներ կատարելու համար, գանձապետական համապատասխան հաշվեհամարների ցանկը:

## 2.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### 2.1. ՇԱՐԿԵՐ ՎՃԱՐԵԼԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՇԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Սահմանադրությունը մեր պետության հիմնական օրենքն է: Այն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և հանդիսանում է կարևոր հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման իրավական հիմքը, սահմանում է հարկերի վճարման պարտականություն բոլորի համար: ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի համաձայն, **յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ**, իսկ 83.5 հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են բացառապես օրենքով:

ՀՀ-ում հարկային քաղաքականությունը մշակվում և իրագործվում է ինչպես վերը նշված ելակետային նորմերի, այնպես էլ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների (մասնավորապես՝ սեփականության, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության, օրենքի առջև բոլորի հավասարության և այլն) և իշխանությունների տարանջատման (օրենսդիր, գործադիր և դատական) սահմանադրական նորմերի հիման վրա, որոնք սերտորեն փոխկապակցված են: Հարկային քաղաքականությունը ներկայումս ընթանում է օրենսդրության կատարելագործման և վարչարարության խստացման ճանապարհով՝ նպատակ ունենալով համապարփակ ձևով կարգավորել հարկային հարաբերությունները, հնարավորինս սահմանափակել հարկային մարմնի հայեցողական լիազորությունները և արգելել կամայականությունն ու խտրականությունը, ապահովել վարչարարության համաչափությունն ու հավասարությունը, բարձրացնել հարկային կարգապահությունը:

#### 2.2. ՇՇ ՇԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՇԱՐԿԱՅԻՆ ՍԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՇՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՀՀ պետական բյուջեն, համայնքների բյուջեները և պարտադիր սույխալական ապահովագրության բյուջեն կազմում են Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն: Պետական, համայնքների և պարտադիր սույխալական

ապահովագրության բյուջեները որոշակի ժամանակահատվածի համար դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագրեր են, որոնց միջոցով պետությունը և տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունները: Բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների մուտքերի ու ելքերի միասնական դասակարգման: Բյուջետային դասակարգումը բյուջեների մուտքերի և ելքերի խմբավորումն է՝ ըստ տեսակների և ուղղությունների, որը կիրառվում է բյուջեների կազմման և կատարման համար և որով ապահովվում է բյուջեների ցուցանիշների համադրելիությունը: Բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝

ա) բյուջեների եկամուտներ,

բ) բյուջեների ծախսեր և տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների միջոցների վերադարձից մուտքեր,

գ) բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ (ներգրավված միջոցների մուտքեր և ներգրավված փոխառու միջոցների վերադարձ),

դ) բյուջեների պարտքեր:

Վերոհիշյալ բյուջեների եկամուտները դասակարգվում են՝

ա) ընթացիկ եկամուտներ (հարկային եկամուտներ, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, տուրքեր, ինչպես նաև ոչ հարկային եկամուտներ),

բ) կապիտալի գործառնություններից եկամուտներ,

գ) պաշտոնական տրանսֆերտներ:

Հարկային մարմինն **ապահովում, հսկում** և (կամ) **վերահսկում** է համախմբված բյուջեի հետևյալ եկամուտները՝

## **1. պետական բյուջե**

### **1.1 ընթացիկ եկամուտներ**

#### **1.1.1 հարկային եկամուտներ՝**

ա) ավելացված արժեքի հարկը, բացառությամբ ՀՀ մաքսային սահմանին գանձվող ավելացված արժեքի հարկի,

բ) ակցիզային հարկը, բացառությամբ ՀՀ մաքսային սահմանին գանձվող ակցիզային հարկի,

գ) շահութահարկը,

դ) եկամտահարկը,

ե) գույքահարկը՝ համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող գույքի համար,

զ) հողի հարկը՝ համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողի համար,

- ե) հաստատագրված վճարները (ներառյալ՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակների համար, ծխախոտի արտադրանք արտադրելու համար, բենզին և դիզելային վառելիք ներմուծող անձանց կողմից հանրապետության ներսում դրանց իրացման համար),
- ը) բնապահպանական և բնօգտագործման վճարներ, բացառությամբ ՀՀ մաքսային սահմանին գանձվող բնապահպանական վճարի,
- թ) պարզեցված հարկը,
- ժ) ճանապարհային վճարը՝ միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար ճանապարհային վճարի տեսակի գծով,
- ժա) հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,
- ժբ) հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքներն ու տույժերը՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տույժերի:

### **1.1.2 պետական տուրքեր**

Հարկային մարմինը վերահսկողություն է իրականացնում պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ, իսկ դրանց գանձումն իրականացնում են պետական տուրք գանձող մարմինները.

### **1.1.3 ոչ հարկային եկամուտներ**

Իրավախախտումների համար հարկային մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը (ներառյալ վարչական և ֆինանսական իրավախախտումները, որոնք հարկային օրենսդրության կարգավորման առարկայից դուրս են).

## **2. համայնքային բյուջեներ**

### **2.1 հարկային եկամուտներ**

Հարկային մարմինն օրենքով սահմանված կարգով իրականացնում է հսկողություն (ստուգումներ) համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար՝ գույքահարկի և հողի համար՝ հողի հարկի հաշվարկման ու վճարման ճշտության նկատմամբ, իսկ դրանց հավաքագրումներն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները.

### **2.2 տուրքեր**

Հարկային մարմինն իրականացնում է վերահսկողություն քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների մատուցման հետ կապված պետական տուրքերի գանձման նկատմամբ,



### 3. պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե

#### 3.1 պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ

Անփոփելով վերը թվարկածը՝ կարելի է եզրակացնել, որ հարկային մարմինն ապահովում է պետական բյուջեի հարկային եկամուտների<sup>1</sup>, ոչ հարկային եկամուտների՝ իրավախախտումների համար հարկային մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հավաքագրումը: Միաժամանակ, հարկ է նշել, որ հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ, օրենսդրությամբ սահմանված դեպքերում, հսկողություն են իրականացնում նաև մաքսային (մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ) և տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքային բյուջե մուտքագրվող գույքահարկի և հողի հարկի գծով):

Հարկային մարմնի կողմից վերահսկվող համախմբված բյուջեի եկամուտների (բացառությամբ պետական տուրքի) հավաքագրման գանձապետական հաշվի համարները բերված են հավելված 2-ում:

### 2.3. ՀԱՐԿԻ, ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ԱՅՆ ՊԱՐՏԱԴՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հարկի հասկացությունը և հարկերի տեսակները, հարկային վեճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում են հարկերի մասին ՀՀ օրենսդրությունը և հարկային հարաբերություններ կարգավորող մյուս իրավական ակտերը, սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է հարկի հասկացությունը, որի համաձայն **հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է**, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանցից մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ *հարկային օրենսդրությամբ* նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում: Նույն օրենքի 2-րդ հոդվածը մասնավորապես սահմանում է, որ հարկային օրենսդրությունը ներառում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքը և առանձին հարկատեսակների մասին օրենքները:

Հայաստանի Հանրապետությունում սահմանված են **հարկերի** հետևյալ **տեսակները**՝

- շահութահարկ,
- եկամտահարկ,

<sup>1</sup> Հանրապետության ներսում վճարվող հարկեր, դրանց փոխարինող հաստատագրված վճարներ և պարզեցված հարկ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ, ճանապարհային վճար, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար:

- ակցիզային հարկ,
- ավելացված արժեքի հարկ,
- գույքահարկ,
- հողի հարկ:

Համապատասխան օրենքներով սահմանված են նաև վերոհիշյալ հարկատեսակներին փոխարինող **հաստատագրված վճարներ** և **պարզեցված հարկեր**:

2. **Պետական տուրքի** հասկացությունը, տուրքերի տեսակները և դրույքաչափերը, տուրք վճարողներին տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները և պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Համաձայն օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

3. Հայաստանի Հանրապետությունում **պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների** հասկացությունը, հավաքագրման իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմունքները, դրույքաչափերն ու վճարման կարգը սահմանված են «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով: Համաձայն օրենքի 3-րդ հոդվածի՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով վճարողների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներ են: Վճարողներ են համարվում գործատուները, վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

4. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **բնապահպանական վճարը** բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով օրենքին համապատասխան պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե վճարվող պարտադիր վճարն է, իսկ **բնօգտագործման վճարը**՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսվարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց օրենքին համապատասխան պետական բյուջե վճարվող վճարն է:

**Բնապահպանական վճարի** տեսակներն են՝

- ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար,
- բ) արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար,

գ) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար:

**Բնօգտագործման վճարի** տեսակներն են՝

ա) ջրօգտագործման համար,

բ) պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար,

գ) կենսապաշարների օգտագործման համար:

5. «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **ճանապարհային վճարը** Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով, օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Հարկային մարմինը հսկողություն է իրականացնում միայն ՀՀ-ում գրանցված բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար ճանապարհային վճարի տեսակի նկատմամբ:

6. «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **կարգավորման պարտադիր վճարները** ՀՀ օրենքներով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

## **2.4. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հարկային մարմինը հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմին է, որը կոչված է իրագործելու «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված խնդիրները, ապահովելու բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները, նպաստելու Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությանը: Հարկային մարմնի համակարգը ներառում է վերադաս հարկային մարմինը, հարկային մարմնի հարկային տեսչությունները (մասնագիտացված և տարածքային) և հարկային մարմնի առանձնացված ստորաբաժանումները: Հարկ վճարողների անմիջական սպասարկումն իրականացվում է հարկային տեսչությունների կողմից, որոնց ցանկը բերված է հավելված 1-ում:

### **1.1. Հարկային մարմինը պարտավոր է՝**

1) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, հարկ վճարողների իրավունքները և օրինական շահերը,

- 2) իրականացնել հսկողություն հարկային օրենսդրության, պետական տուրքի և պարտադիր այլ վճարների վերաբերյալ օրենքների ու դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ,
- 3) հանցագործության հատկանիշներով հարկային օրենսդրության խախտման դեպքեր հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով անցկացնել հետաքննություն,
- 4) իրականացնել հարկ վճարողների հաշվառումը,
- 5) հարկային օրենսդրության և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ իրականացնել բացատրական աշխատանքներ, տեղեկացնել հարկ վճարողներին գործող հարկերի և պարտադիր այլ վճարների մասին,
- 6) իրականացնել օրենսդրությամբ սահմանված չափից ավելի վճարված (բռնագանձված) հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվանցումը (կամ վերադարձման համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների, տեղեկանքների տրամադրումը),
- 7) պահպանել հարկային գաղտնիքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով,
- 8) սահմանված ժամկետներում քննարկել հարկ վճարողի ներկայացրած բողոքը հարկային մարմնի (ստորաբաժանման) կամ հարկային ծառայողի գործողությունների (անգործության) դեմ և ընդունված որոշման մասին տեղյակ պահել հարկ վճարողին,
- 9) իրականացնել ծառայողական քննություն հարկային ծառայողների կատարած խախտումների վերաբերյալ,
- 10) Հարկային մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կրում է նաև այլ պարտականություններ:

## **1.2. Հարկային մարմինն իրավունք ունի՝**

- 1) հարկ վճարողներից, հարկային գործակալներից և հարկային հարաբերություններին առնչվող այլ անձանցից պահանջել փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման ու վճարման համար հիմք համարվող օրենքի հիման վրա սահմանված հաշվետվություններ, հաշվարկներ,
- 2) հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման, վճարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով անցկացնել ստուգումներ՝ նախարարությունների, պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմիններ-

րի, հիմնարկների աշխատակազմերում, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող, եկամուտներ, գույք և ծախսեր հայտարարագրող անձանց մոտ,

- 3) օրենսդրությամբ սահմանված կարգով վերցնել փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին,
- 4) ստուգման կամ ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել ստուգվող սուբյեկտի գրասենյակային, առևտրային, արտադրական, պահեստային, արխիվային, դրամարկղային տարածքներ և ստուգվող այլ ստորաբաժանումներ, ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով կապարակնքել, կնքել այդ տարածքները, այցելել հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված հարկային հաշվառման գրքերի գրանցման հասցեները,
- 5) օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույն հաշվարկել, վերահաշվարկել, ճշգրտել հարկ վճարողի, հարկային գործակալի, հարկային պարտավորություն ունեցող այլ անձի՝ հարկերի և պարտադիր այլ վճարների գծով պարտավորությունները՝ երրորդ անձանցից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա կատարել չափագրումներ, գույքագրումներ, հսկիչ գումարներ՝ ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 6) հարկային պարտավորությունները ճշտելու և հարկերի վճարման հետ կապված այլ խնդիրներ քննարկելու նպատակով գրավոր ծանույցմամբ առաջարկել հարկ վճարողներին (հարկ վճարողների ներկայացուցիչներին), հարկային գործակալներին և այլ անձանց ներկայանալ հարկային մարմին,
- 7) հարկային հսկողության ընթացքում ներգրավել մասնագետներ, փորձագետներ և թարգմանիչներ,
- 8) պահանջել հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների վերացում և վերահսկել առաջադրված պահանջի կատարումը,
- 9) օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել զենք և զինամթերք,
- 10) օրենքով նախատեսված կարգով իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հարկային իրավախախտումների վերաբերյալ առկա տեղեկությունների, ինչպես նաև հարկային հանցագործության կատարման մասին վկայող այլ փաստերի ու հանգամանքների առկայության դեպքում,

- 11) օպերատիվ անհրաժեշտությունից ելնելով՝ օգտագործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների փոխադրական և կապի միջոցները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցելով ծախսերը,
- 12) ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջոցառումներ կատարելու միջոցները կազմակերպել լիազորված մարմիններ,
- 13) հայց ներկայացնել դատարան, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, դատարանում գործը վարելու համար տալ լիազորագրեր,
- 14) դատարան ներկայացվելիք հայցերի ապահովման նպատակով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում արգելանք դնել գույքի վրա, վերջինիս վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի վճռից հետո մասնակցել գույքի իրացմանը և հսկել ստացված միջոցների մուտքագրումը պետական բյուջե,
- 15) լիազորված մարմիններ ներկայացնել առաջարկություններ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու վերաբերյալ, եթե տնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական կամ այլ անձինք հաշվառման չեն կանգնել հարկային մարմնում կամ հարկային մարմին չեն ներկայացրել ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հաշվարկներ, հայտարարագրեր, հաշվետվություններ կամ հաշվապահական փաստաթղթեր՝ առանց որոնց հարկային մարմնի պաշտոնատար անձինք չեն կարող որոշել հարկման բազան, կամ հնարավոր չէ հարկերի գանձումը, կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց թույլ չեն տալիս մուտք գործել հարկ վճարողների տարածքներ, եթե նշված պաշտոնատար անձինք ունեն այդպիսի իրավասություն,
- 16) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ տրամադրել,
- 17) ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում ընդունել գերատեսչական նորմատիվ ակտեր, որոնց կատարումը պարտադիր է պետական մարմինների, համայնքների, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող կամ եկամուտ ստացող (վճարող) այլ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար,
- 18) Հարկային մարմինն օգտվում է նաև օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

## **2.1. Հարկ վճարողն իրավունք ունի՝**

- ա) ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերին,
- բ) հարկային տեսչություն ներկայացնել բացատրություններ հարկերի հաշվարկման ու վճարման 7 ստուգումների արդյունքների վերաբերյալ,

- գ) օրենքով սահմանված կարգով գանգատարկել հարկային տեսչության պաշտոնատար անձանց գործողությունները,
- դ) առանձին հարկատեսակի մասին օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով դիմել հարկային արտոնություն ստանալու համար:

## 2.2. Հարկ վճարողը պարտավոր է՝

- ա) պետական գրանցում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում, հաշվառման կանգնել հարկային տեսչությունում և ստանալ հարկ վճարողների հաշվառման համարներ՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով,
- բ) ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ), կազմել հաշվետվություններ՝ իր ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ,
- գ) հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե,
- դ) սահմանված ժամկետներում հարկային տեսչություն ներկայացնել (մասնավորապես՝ ըստ պատկանելության հանձնել կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ,
- ե) ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները,
- զ) անհրաժեշտ պայմաններ ապահովել հարկային տեսչության կողմից իրականացվող ստուգումների (ուսումնասիրությունների) համար,
- է) ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը,
- ը) հարկային տեսչության ստուգումների (ուսումնասիրությունների) հետևանքով բացահայտված, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի գումարի չափով ուղղումներ (ճշգրտումներ) կատարել հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառմանը և (կամ) գրանցումներին վերաբերող) փաստաթղթերում,
- թ) հարկային տեսչության կազմած ստուգման ակտի փաստերի հետ չհամաձայնելու դեպքում ներկայացնել ակտը չստորագրելու պատճառների վերաբերյալ գրավոր բացատրություն, որը կազմում է ակտի անբաժանելի մասը:

### 3.

## ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

### 3.1. ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՐԳԸ

1. Հարկային հարաբերությունների, հարկային պարտավորությունների առաջացման հիմք են հանդիսանում հիմնականում քաղաքացիաիրավական գործարքները, որոնք կապված են ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ: Հարկային հարաբերությունների ճիշտ ընկալման համար անհրաժեշտ է նախ հասկանալ **«ձեռնարկատիրական գործունեություն»** հասկացությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն, ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելու, ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու շահույթ ստանալն է:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, **ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը**: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:

Վերը նշված սահմանումներից կարելի է եզրակացնել, որ ձեռնարկատիրական գործունեությունը ենթադրում է պարբերաբար շահույթ ստանալու նպատակով իրականացվող պարբերական գործունեություն: Այդ պատճառով էլ **մեկանգամյա** ծառայության մատուցումը, աշխատանքի կատարումը, ապրանքի վաճառքը **ձեռնարկատիրական համարվել չեն կարող**: Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձը գործում է իր անունից և իր ռիսկով: Նա պարտավոր է կանխատեսել իր գործունեության հնարավոր անբարենպաստ հետևանքները և միջոցներ ձեռնարկել այդպիսիք կանխելու համար:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին պետք է ստեղծի **իրավաբանական անձ** կամ լինի դրա մասնակիցը, կամ գրանցվի որպես **անհատ ձեռնարկատեր**: Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է ստա-



նալ պետական գրանցում՝ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն: Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի պետական գրանցումը որպես այդպիսին, տվյալ սուբյեկտի իրավունակության ճանաչումն է պետության կողմից: Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումն իրականացնում է պետական ռեգիստրը, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության համակարգում: Պետական ռեգիստրը կազմված է կենտրոնական մարմնից և տարածքային ստորաբաժանումներից:

**Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ հետապնդող գործունեություն:** Անհատ ձեռնարկատեր կարող են լինել ՀՀ և օտարերկրյա գործունակ քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը օրենքով սահմանափակված չէ: Անհատ ձեռնարկատերն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում: Անհատ ձեռնարկատիրոջ իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, նրա գործունեության երաշխիքները և գործունեության դադարեցման պայմանները սահմանված են «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքով: Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից:

Հասարակական հարաբերություններում ֆիզիկական անձինք մասնակցում են ոչ միայն որպես անհատներ, այլև միասին, իրենց կողմից ստեղծված զանազան կազմակերպությունների միջոցով, որոնք ստեղծվում են հասարակության և իրենց ստեղծողների պահանջումները բավարարելու նպատակով որոշակի գործառույթներ կատարելու համար: Սակայն, որպեսզի կազմակերպությունը մասնակցի իրավահարաբերությունների, կարողանա ձեռք բերել իրավունքներ, ստանձնել պարտականություններ, այլ անձանց ոտնձգությունից պաշտպանել իր իրավունքներն ու շահերը, պետք է ճանաչվի քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ **իրավաբանական անձ:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50 հոդվածը սահմանում է, որ **իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:** Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ: Օրենսդիրը, իրավաբանական անձանց գործունեության նպատակ-

ներից ելնելով, նրանց բաժանում է երկու խմբի՝ **առևտրային** և **ոչ առևտրային** կազմակերպությունների: Առաջինների գործունեության հիմնական նպատակը շահույթի ստացումը և այն մասնակիցների միջև բաշխելն է: Երկրորդները մնան նպատակ չեն հետապնդում և ստացված շահույթը մասնակիցների միջև չեն բաշխում: Առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել **տնտեսական ընկերակցությունների, ընկերությունների կամ կոոպերատիվների (արտադրական)** ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72 հոդվածի համաձայն, տնտեսական ընկերություններ և ընկերակցություններ են համարվում իրենց հիմնադիրների (առաջին մասնակիցների) և (կամ) մասնակիցների՝ բաժնեմասերի բաժանված համապատասխանաբար կանոնադրական (ընկերություններում) և բաժնեհավաք (ընկերակցություններում) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները: Հիմնադիրների (մասնակիցների) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը նրան է պատկանում սեփականության իրավունքով:

Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել **սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության** ձևով: Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով: Իրավաբանական անձանց առանձին տեսակների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման առնչությամբ ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են, իսկ իրավական վիճակը, նրա մասնակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանվում են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այնպես էլ իրավաբանական անձանց համապատասխան տեսակի մասին առանձին օրենքներով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի համաձայն, օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո, ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում **անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք պարտավոր են հաշվառման կանգնել հարկային տեսչությունում** և ստանալ հարկ վճարողների հաշվառման համարներ՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: Հարկային մարմնում հաշվառման կանգնելու նպատակով անհրաժեշտ է դիմել այն տարածքային հարկային տեսչություն, որի վարչատարածքային պատկանելության ներքո գտնվող պետական ռեզիստրում կատարվել է հարկ վճարողի պետական գրանցումը: Հարկ վճարողները հարկային տեսչությունում հաշվառման կանգնելու և հարկ վճարողի հաշվառման համար ստանալու նպատակով հարկային տեսչությունում **լրացնում են համապատասխան քարտ**, որը տեղեկություններ է պարունակում հարկ վճարողի անվան, պետական գրանցման, իրավաբանական անձի գտնվելու վայրի (անհատ ձեռնարկատիրոջ համար բնակության վայրի) հասցեի, գործունեության տեսակների և դրանց իրականացման վայրի հասցեների, բանկային հաշվի համարների վերաբերյալ և այլն: ՀՀ կառավարության 07.06.1995թ. թիվ 321 որոշման համաձայն, հարկ վճարողներին հաշվառման վերցնելիս նրանց տրամադրվում է **հարկ վճարողի հաշվառման համար** (ՀՎՀՀ), որը կազմված է

ութանիշ թվից: Հարկ վճարողների հաշվառման համարը միակն է և ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման: Հարկ վճարողների հաշվառման համարները պարտադիր նշվում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կնիքների և դրոշմակնիքների վրա: Առանց հարկ վճարողների հաշվառման համարի ստացման կամ փաստաթղթերում նշման կատարվող բոլոր տեսակի գործառնությունները չեն իրականացվում համապատասխան իրավասու մարմինների կողմից՝ մինչև հարկ վճարողների հաշվառման համարի ստանալը կամ փաստաթղթերում նշելը:

**Առանց** պետական գրանցման և (կամ) հարկային մարմնում **հաշվառման կանգնելու** ձեռնարկատիրական գործունեության իրականացումն արգելված է և առաջացնում է պատասխանատվություն, մասնավորապես՝ համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169 հոդվածի կամ ՀՀ քրեական օրենսգրքի 188 հոդվածի:

### **3.2. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

Պետական գրանցում ստանալուց և հարկային մարմնում հաշվառման կանգնելուց հետո հարկային կարգապահության երկրորդ պայմանը լիցենզավորման ենթակա գործունեություն ծավալելու դեպքում նախապես համապատասխան լիցենզիա ստանալու անհրաժեշտությունն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52 հոդվածի 2-րդ մասի համաձայն, գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա:

Հաշվի առնելով նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26 հոդվածի երրորդ մասով սահմանված այն դրույթը, որ քաղաքացիների՝ առանց իրավաբանական անձ կազմավորելու իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենսգրքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից, կարելի է եզրակացնել, որ օրենսգրքով սահմանված լիցենզավորման պահանջը հավասարապես վերաբերում է նաև անհատ ձեռնարկատերերին: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում են օրենքով, որոնցից կարելի է առանձնացնել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքները:

***Լիցենզիան լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ է:*** Այն չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն

իրականացնող այլ անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ՝ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակների համար **լիցենզիաները տրվում են երկու ընթացակարգով՝ պարզ և բարդ**: Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են միայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով: Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են միայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության կողմից հաստատված լիցենզավորման կարգերով: Պարզ ընթացակարգով լիցենզիաները տրվում են միայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, իսկ բարդ ընթացակարգով լիցենզիաները՝ ՀՀ կառավարության 24.09.2001թ թիվ 895 որոշմամբ հաստատված համապատասխան լիցենզավորող մարմինների կողմից:

Լիցենզիա ստանալու նպատակով անձինք պետք է դիմեն համապատասխան լիցենզավորող մարմիններ՝ ներկայացնելով մասնավորապես հետևյալ փաստաթղթերը.

1) **լիցենզիա ստանալու մասին հայտը՝** նշելով՝

ա) իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը,

բ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

գ) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկատվություն,

դ) իրավաբանական անձանց համար հարկ վճարողի հաշվառման համարի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի համար՝ հարկ վճարողի հաշվառման համարի կամ սույիալական քարտի համարի վերաբերյալ տեղեկատվություն,

2) իրավաբանական անձի համար՝ **կանոնադրության պատճենը** և պետական գրանցման վկայականի պատճենը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը,

3) անձի մասնագիտական **որակավորումը հաստատող փաստաթուղթը՝** որակավորում պահանջող գործունեության տեսակով զբաղվելու համար հայտ ներկայացվելու դեպքում,

4) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ փաստաթղթեր: Եթե օրենքում նշված ժամկետներում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, և

հայտատուն օրենքով սահմանված կարգով և չափով վճարել է պետական տուրքը և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացրել է լիցենզավորող մարմին, ապա լիցենզավորող մարմինը **պարտավոր** է սույն մասում նշված ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին **տրամադրել լիցենզիա**, և լիցենզիան հայտատուին հանձնելու կամ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հայտատուն իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:

Լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիաների գրանցամատյաններից այլ անձանց տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հիմնականում սահմանված են տարեկան պետական տուրքեր, որոնց հերթական վճարումը ներկայումս յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիցենզիաների (թույլտվությունների, արտոնագրերի) վրա նշված լիցենզիաների (թույլտվությունների, արտոնագրերի) տրման ամսաթվից ոչ ուշ: Հարկ է նշել, որ հերթական տարեկան պետական տուրքի վճարումը սահմանված ժամկետում չկատարելը լիցենզիայի գործողության կասեցման հիմք է հանդիսանում:

**Արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով**, իսկ առանց համապատասխան լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26 հոդված, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169 հոդված, ՀՀ քրեական օրենսգրքի 188 հոդված):

### **3.3. ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՅՎԱՌՈՒՄԸ**

Պետական գրանցում ստանալուց և հարկային մարմնում հաշվառման կանգնելուց, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով համապատասխան լիցենզիա ստանալուց հետո կարելի է սկսել ձեռնարկատիրական գործունեության իրականացումը: Ձեռնարկատիրական գործունեություն սկսելուց հետո հարկային կարգապահության տեսանկյունից կարևորվում է եկամուտների և ծախսերի հաշվառման հարցը: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի համաձայն՝ **հարկ վճարողները պարտավոր են** Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով **իրականացնել հաշվապահական հաշվառում**, հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ **նաև այլ հաշվառում** և (կամ) **գրանցումներ**, կազմել **հաշվետվություններ**՝ իրենց ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ: Հարկային կարգապահության տեսանկյունից հարկման նպատակով եկամուտների

և ծախսերի հաշվառման վրա ազդող գործառնությունների հաշվառման ընթացակարգերը կարելի է դասակարգել հետևյալ հիմնական խմբերում.

### 1. հաշվապահական հաշվառում

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ մասի համաձայն, **բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում**: Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով: Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, հաշվապահական հաշվառմանը վերաբերող ՀՀ այլ օրենքներ, հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի<sup>2</sup> կողմից ընդունված իրավական այլ ակտեր (մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման ստանդարտները, հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները և այլն):

Պարզեցված հարկ վճարողներն, այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում, պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կարող են հաշվապահական հաշվառում չվարել:

### 2. ծախսերի հաշվառում ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ հաստատված պահանջները բավարարող՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերով

ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ հաստատված կարգի դրույթներին համապատասխան կազմված ծախսերը հիմնավորող փաստաթուղթը, ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում, համարվում է նաև գործարքի մյուս կողմի եկամուտները հիմնավորող փաստաթուղթ: Հարկ վճարողի իրականացրած գործարքը հաստատող՝ հարկման հիմք հանդիսացող (ծախսերը հիմնավորող) հաշվարկային փաստաթղթում ըստ էության պետք է արտացոլված լինեն հետևյալ տեղեկությունները՝

- ա) հաշվարկային փաստաթղթի հերթական **համարը** և դուրսգրման **ամսաթիվը**,
- բ) ակտիվներ վաճառող (տրամադրող) կամ ծառայություն մատուցող, ինչպես նաև դրանք ստացող հարկ վճարողի՝
  - իրավաբանական անձի, իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության **լրիվ անվա-**

2 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, իսկ բանկերի, վարկային, վճարահաշվարկային կազմակերպությունների, ապահովագրական և գրավատնային գործունեություն իրականացնող, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց և այդ անձանց ինքնակարգավորվող անձանց համար՝ կենտրոնական բանկը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ:

**նումը**, կնիք կամ դրոշմակնիք ունենալը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր լինելու դեպքում՝ հարկ վճարողի **կնիքը կամ դրոշմակնիքը**, եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 հազար դրամը, **գտնվելու վայրը (հասցեն), ղեկավարի** (սահմանված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձի կամ անձանց) **պաշտոնը, անունը** (անվան սկզբնատառը), **ազգանունը** և **ստորագրությունը, հարկ վճարողի հաշվառման համարը**,

- **Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի**, իսկ չափահաս և (կամ) ՀՀ քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ **անձը հաստատող այլ փաստաթղթի սերիան** և **համարը**, բնակության (հաշվառման) վայրի **հասցեն, ստորագրությունը**, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «**անհատ ձեռնարկատեր**» **նշումը** և **հարկ վճարողի հաշվառման համարը**,

դ) **ակտիվների անվանացանկն ու քանակը** և (կամ) **ծառայությունների տեսակն ու ծավալը**,

ե) **ակտիվների միավորի գինը** և **ընդհանուր արժեքը** կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:

### **3. Եկամուտների հաշվառում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման միջոցով**

Հայաստանի Հանրապետության տարածքում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման, օգտագործման, գրանցման և հաշվառման հետ կապված հարցերը, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողությունը և օրենքի խախտման համար պատասխանատվությունը կարգավորվում են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքներով, իսկ դրանց շահագործման կանոնները՝ նաև ՀՀ կառավարության 26.08.04թ. թիվ 1325-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում **կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից (քայառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների, վարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց՝ այդ գործունեության մասով, ֆոնդային բորսաների և Կենտրոնական դեպոզիտարիայի) մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը**, օրենքով սահմանված ժամանակացույցին և ոլորտներին համապատասխան, **պարտադիր է**: ՀԴՄ-ն շահագործող պատասխանատու անձը պարտավոր է հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել դրամական գումարը, որոշել ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին (պատվիրատուին և այլն), ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը ստանալու պահին, ապրանքի հետ միասին, գնորդին տրամադրել

դրամարկղային չեկ (կտրոն), իսկ ծառայությունների մատուցման դեպքում չեկը (կտրոնը) տրամադրվում է այդ ծառայության դիմաց կանխիկ վճարում ստանալու պահին:

**4. ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 որոշմամբ հաստատված «Առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման)» գրքի վարում**

Առաքման գրանցման գիրք վարում են ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող կամ տեղափոխող ՀՀ հարկային մարմիններում հաշվառման կանգնած հարկ վճարողները՝ բացառությամբ միայն պարզեցված հարկ վճարողների, բանկերի և վարկային կազմակերպությունների: Հարկ վճարողի կողմից առաքումների գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են իրենց կողմից առաքվող կամ իրենց մոտից տեղափոխվող ամբողջ արտադրանքը և ապրանքները՝ բացառությամբ պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը, խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մամուլի տեղափոխումը, վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը, տնտեսվարող սուբյեկտների հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը: Առաքման գրանցման գրքի ձեռքբերման և վարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 որոշմամբ:

**5. ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշմամբ հաստատված «Արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման)» գրքի վարում**

Հասույթի գրանցման գիրք վարում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով), ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր ունեցող, ՀՀ հարկային մարմիններում հաշվառման կանգնած հարկ վճարողները, բացառությամբ միայն պարզեցված հարկ վճարողների, միայն ոչ նյութական ակտիվների, անշարժ գույքի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակվող թերթերի վաճառքով զբաղվող հարկ վճարողների: Հասույթի գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են ձեռք բերված (սեփական արտադրության արտադրանքի դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում (կետերում) ընդունված) բոլոր ապրանքները՝ ստանալուց (ընդունելուց) անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը (բայց ոչ ուշ, քան մինչև ապրանքներն ստանալու օրվա ավարտը)՝ անկախ առևտրի իրականացման ձևից (մեծածախ կամ մանրածախ): Հասույթի գրանցման գրքի ձեռքբերման և վարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշմամբ:



**6. «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 08.10.2003թ. թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված կարգով դրամարկղային գործառնությունների ձևակերպում և դրամարկղային գրքի վարում**

«Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձինք, պետական և այլ հիմնարկների, դրանց՝ հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), օտարերկրյա կազմակերպությունների՝ հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) **պարտավոր են** փաստաթղթավորել դրամարկղային գործառնությունները, վարել դրամարկղային գիրք և պահպանել կանխիկ դրամի՝ դրամարկղ մուտքագրման և ելքագրման օրենսդրությամբ սահմանված կարգը (ներառյալ օրենքով սահմանված սահմանափակումները): «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները **չեն տարածվում** անհատ ձեռնարկատերերի, բանկերի և դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց և վարկային կազմակերպությունների վրա: Ներկայումս դրամարկղային գրքեր վարող կազմակերպությունները կանխիկ դրամով վճարումներ կարող են կատարել ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում՝ **ոչ ավելի քան 300.0 հազար դրամի** չափով, իսկ մեկ ամսվա ընթացքում՝ **ոչ ավելի, քան 3.0 միլիոն դրամի** չափով:

**7. «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 12.08.2000թ. թիվ 471 որոշմամբ հաստատված կարգով եկամտուների և ծախսերի հաշվառման գրքի վարում**

Նշված գիրքը վարում են **միայն պարզեցված հարկ վճարողները**: Հաշվառման գրքում կատարվող գրանցումների համար հիմք է հանդիսանում տնտեսական գործառնության կատարման փաստը, որը հիմնավորվում է սկզբնական հաշվառման փաստաթղթերով: Սկզբնական փաստաթղթերը հաշվառվում են մինչև գործառնության կատարման օրվա վերջը: Չի թույլատրվում սկզբնական փաստաթղթերում կատարել չժանույված ուղղումներ: Մխալի ուղղումը պետք է հաստատված լինի տվյալ փաստաթուղթը ստորագրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ, և պետք է նշվի ուղղման ամսաթիվը:

**8. ակցիզային դրոշմանիշերի հաշվառում**

ՀՀ կառավարության 26.10.1999թ. թիվ 662 որոշմամբ հաստատված կարգի համաձայն, ակցիզային դրոշմանիշերը համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր և սահմանված կարգով հաշվառվում են ինչպես հարկային տեսչությունների, այնպես էլ դրոշմանիշերը ձեռք բերող անձանց կողմից: Վերջիններս դրանց գծով վարում են **առանձնացված հաշվառում**՝ խիստ հաշվառման փաստաթղթերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**9. ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 14.06.2006թ թիվ 875-Ն որոշմամբ հաստատված կարգով վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի վարում**

Աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման պայմանագրերը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի լուծումը գրանցվում է գրանցամատյանում: Պայմանագիրը կնքելուց հետո, նույն օրն այն գործատուի կամ գործատուի լիազորած անձի կողմից թվագրվում և գրանցվում է գրանցամատյանում: Պայմանագրի գրանցման փաստը հավաստվում է փաստաթղթի օրինակների վրա գործատուի կողմից դրվող հետևյալ մակագրությամբ՝ «Պայմանագիրը գրանցված է», տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, գրանցման համարը, գործատուի կամ գործատուի ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը: Յուրաքանչյուր աշխատողի մասին տեղեկությունները գրանցամատյանում գրանցվում են առանձին էջում:

**3.4. ՇԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՇԱՅՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԸՆԴՀԱՆՍՈՒՄ ԿԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի հաշվառման արդյունքներով հարկ վճարողները **պարտավոր են** սահմանված ժամկետներում հարկային տեսչություն ներկայացնել (մասնավորապես՝ ըստ պատկանելության հանձնել կամ ուղարկել փոստով՝ ՀՀ կառավարության 16.02.06թ, N 471-Ն որոշմամբ հաստատված պարզեցված կարգով) հարկային օրենսդրությամբ նախատեսված **հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ:**

Հաշվարկների, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետները ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքերում ներկայացնելու վերջին ժամկետները **տեղավորվում են** հաջորդ առաջին աշխատանքային օրը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածով սահմանված է, որ գործունեություն չիրականացնելու, ինչպես նաև հարկվող օբյեկտ հանդիսացող գույք չունենալու մասին հայտարարությունը հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկի (հայտարարագրի) ամփոփ ձևն է: Հետևաբար, գործունեությունն անորոշ ժամանակով դադարեցնելու դեպքում կարելի է հարկային օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունների, հաշվարկների և այլ փաստաթղթերի դատարկ (զծիկներով) բլանկներ ներկայացնելու փոխարեն հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել հայտարարություն գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու, գույքային հարկերով (գույքահարկ, հողի հարկ) հարկվող օբյեկտներ չունենալու վերաբերյալ, իսկ անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր սույնիալական ապահովագրության նվազագույն ամսական վճարներ չկատարելու համար անհրաժեշտ է ժամանակավորապես հարկային մարմին հանձնել նաև պետական գրանցման վկայականը:

Հարկ վճարողներին անհրաժեշտ է խիստ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ տարբեր հարկատեսակների հաշվարկների համար սահմանված են հարկային մարմիններին ներկայացնելու տարբեր ժամկետներ, իսկ այդ ժամկետ-

ների խախտումը կարող է առաջ բերել և՛ ֆինանսական, և՛ վարչական պատասխանատվություն: Այսպես, հարկ վճարողների կողմից հիմնականում ներկայացվում են.

■ **շահութահարկի գծով՝**

- շահութահարկի հաշվարկներ և հաշվապահական (ֆինանսական) **հաշվետվություններ՝** մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա **ապրիլի 15-ը** ներառյալ,
- իրենց ընտրած հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների սկզբունքների և կանոնների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին գրավոր **տեղեկություններ՝** շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետում: Դրանք կարող են արտապուլվել և սովորաբար արտապուլվում են «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթություններ» ձև N 5-ի «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն» բաժնում,
- հաշվետու տարվա ընթացքում անհուսալի ճանաչված դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի վերաբերյալ գրավոր **տեղեկանք** (բացառությամբ յուրաքանչյուր դեբիտորի մասով 100.0 հազ. դրամը չզերազանցող պարտքի)՝ մինչև հաշվետու տարվա համար շահութահարկի հաշվարկի ներկայացման օրը, սակայն ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա **ապրիլի 15-ը**,
- նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկ վճարողն ամսական կանխավճարի մեծությունը որոշում է ինքնուրույն, այդ մասին **գրավոր հայտնելով** հարկային տեսչության մարմնին՝ շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետից ոչ ուշ, այսինքն՝ մինչև **ապրիլի 15-ը** ներառյալ,
- հարկային գործակալի կողմից հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված (հաշվարկված) և բյուջե վճարված շահութահարկի գումարների վերաբերյալ **ամփոփ հաշվարկ՝** եռամսյակը մեկ անգամ, մինչև եռամսյակին հաջորդող **երկրորդ ամսվա 1-ը**,
- ոչ ռեզիդենտի կողմից տարեկան եկամուտների մասին **հայտարարագիր**, ինչպես նաև կամայական (իր կողմից որոշված) ձևով **հաշվետվություն** իր գործունեության մասին՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող **ապրիլի 15-ը**, իսկ գործունեության դադարեցման դեպքում՝ գործունեության դադարեցման օրվանից սկսած՝ **մեկ ամսվա ընթացքում**:

■ **եկամտահարկի գծով՝**

- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին **հաշվարկ՝** եռամսյակը մեկ, հաջորդ եռամսյակի **երկրորդ ամսվա 1-ից** ոչ ուշ,
- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների,

նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների, այդ եկամուտների պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին գրավոր **տեղեկություններ**՝ եռամսյակը մեկ, հաջորդ եռամսյակի **երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ**: Կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման դեպքում այդ տեղեկությունները ներկայացվում են լուծարման (գործունեության դադարեցման ) մասին պետական գրանցում իրականացնող մարմին դիմում տալու օրվանից, **5-օրյա ժամկետում**,

- անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց տարեկան եկամուտների մասին **հայտարարագիր**՝ հաջորդ տարվա **մարտի 1-ից ոչ ուշ**: Մինչև հարկային տարին ավարտելը գործունեությունը դադարեցնելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում հայտարարագիրը ներկայացվում է ոչ ուշ, քան **մեկնելուց մեկ ամիս առաջ**: Ֆիզիկական անձինք հայտարարագրերը ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտապուլված տվյալներում,
- **ակցիզային հարկի գծով**
  - ակցիզային հարկի **հաշվարկ** յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև դրան հաջորդող **ամսվա 15-ը**,
  - ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները որպես հումք օտարելու դեպքում հաշվարկային փաստաթղթերի ստացման և օգտագործման վերաբերյալ **հաշվարկ**՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող **ամսվա 15-ը**,
  - ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները որպես հումք օտարող և ձեռք բերող անձանց կողմից հաշվարկային **փաստաթղթերի մեկ օրինակը**՝ մինչև գործարքների կատարմանը հաջորդող **ամսվա 15-ը**,
  - Հայաստանի Հանրապետությունից արտահանվող, ՀՀ-ում արտադրված դրոշմավորման ենթակա ապրանքների՝ այլ պետությունների կողմից սահմանված ձևի ակցիզային դրոշմանիշերով (կամ առանց դրոշմանիշերի) դրոշմավորման դեպքում **տեղեկություններ**՝ եռամսյակը մեկ անգամ՝ մինչև հաջորդ եռամսյակի **երկրորդ ամսվա 1-ը**,
  - չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման համար **դիմում**՝ ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման օրվանից մինչև 3-ամսյա ժամկետի **լրանալու օրը ներառյալ**:
- **ավելացված արժեքի հարկի գծով**
  - ավելացված արժեքի հարկի **հաշվարկ** յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև եռամսյակին հաջորդող **ամսվա 20-ը ներառյալ**, ամսական ԱԱՀ վճարող ճանաչվելու՝ նախորդ օրացույցային տարվա հասույթը 60.0 մլն դրամը գերազանցելու դեպքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ **ամսվա 20-ը ներառյալ**,

- **տեղեկություններ**՝ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ կամ ամիս) իրենց կողմից ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվների և իրենց կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդների տրված) հարկային հաշիվների վերաբերյալ, հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ** (եթե դրանցում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է ՀՀ կառավարության սահմանած չափը, որը 01.07.05թ-ից 100.0 հազ. դրամ է կազմում),
- **գույքահարկի գծով**՝

  - կազմակերպությունների շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի **հաշվարկներ**՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև եռամսյակին հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ**։

Կազմակերպությունների գույքահարկի եռամսյակային հաշվարկները ներկայացվում են՝

    1. համայնքի վարչական սահմաններում գտնվող շինությունների համար՝ դրանց գտնվելու վայրի տեղական ինքնակառավարման մարմին,
    2. համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների համար՝ շինության գտնվելու վայրի տարածքը սպասարկող հարկային մարմին,
    3. փոխադրամիջոցների համար՝ կազմակերպությունների պետական գրանցման (ըստ իրավաբանական հասցեի) վայրի տեղական ինքնակառավարման մարմին։
  - ֆիզիկական անձինք շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան հաշվարկներ **կարող են ներկայացնել** հաշվետու տարվա համար՝ մինչև հաշվետու տարվա **հոկտեմբերի 1-ը ներառյալ**։

Ֆիզիկական անձանց գույքահարկի տարեկան հաշվարկները ներկայացվում են՝

    1. համայնքի վարչական սահմաններում գտնվող շինությունների համար՝ դրանց գտնվելու վայրի տեղական ինքնակառավարման մարմին,
    2. համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների համար՝ շինության գտնվելու վայրի տարածքը սպասարկող հարկային մարմին,
    3. փոխադրամիջոցների համար՝ ֆիզիկական անձի հաշվառման վայրի տեղական ինքնակառավարման մարմին։ Հաշվառման վայրի բացակայության դեպքում հաշվարկները ներկայացվում են ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմին։ Եթե հաշվառման կամ հիմնական բնակության վայրը Հայաստանի Հան-

րապետության տարածքից դուրս է, ապա հաշվարկները ներկայացվում են փոխադրամիջոցի գրանցման վայրի տեղական ինքնակառավարման մարմին:

■ **Հողի հարկի գծով՝**

- կազմակերպությունների հողի հարկի տարեկան **հաշվարկները** հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար՝ մինչև հաշվետու տարվա **սեպտեմբերի 1-ը (ներառյալ)**: Հաշվետու տարվա ընթացքում նոր ձեռք բերված, նպատակային նշանակությունը (հողատեսքը) փոփոխված կամ օտարված հողամասի համար հողի հարկի տարեկան հաշվարկները ներկայացվում են սեփականության, օգտագործման իրավունքի ծագման կամ դադարման, ինչպես նաև նպատակային նշանակության փոփոխության սահմանված կարգով՝ գրանցման պահից սկսած՝ **մեկ ամսվա ընթացքում**:

Կազմակերպությունները հողի հարկի տարեկան հաշվարկները ներկայացնում են՝

1. համայնքների վարչական սահմաններում գտնվող հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար՝ դրա գտնվելու վայրի տարածքը սպասարկող հաշվառող (օրենքով սահմանված ժամանակացույցին համապատասխան հարկային կամ տեղական ինքնակառավարման) մարմին,
2. համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հարկման ենթակա հողամասերի հողի հարկի հաշվարկները՝ կազմակերպության գտնվելու (պետական գրանցման) վայրի հարկային տեսչություն:

Ֆիզիկական անձինք հողի հարկի գծով հաշվարկ չեն ներկայացնում:

■ **Հաստատագրված վճարի գծով՝**

- հաստատագրված վճար վճարողների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ **հայտարարություններ** ներկայացնում են մինչև նախատեսված ոլորտներում գործունեություն սկսելը կամ ելակետային տվյալներում փոփոխություններ կատարելը, իսկ հետագայում յուրաքանչյուր կիսամյակի համար նախօրոք՝ **հունիս** և **դեկտեմբեր** ամիսների ընթացքում, **բացառությամբ** առևտրի իրականացման վայրի, տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի և ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողների (ներկայացվում է **ամսական՝** մինչև հաշվետու ամսվան նախորդող ամսվա **վերջին աշխատանքային օրը**), ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների (ներկայացվում է եռամսյակային՝ մինչև այդ եռամսյակին նախորդող **ամսվա վերջին օրը**) և խաղարկությունով և ոչ խաղարկությունով, իչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողների (ներկայացվում է ամսական՝ մինչև այդ ամսվան հաջորդող **ամսվա 15-ը**),

- սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին (առևտրի իրականացման վայր կազմակերպելու, ավտոտեխսպասարկման կայանների համար յուրաքանչյուր ամսվա, իսկ կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն և հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով) **հայտարարություն՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ**,
  - կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության համար օրենքով սահմանված համամասնությունների մասին **տեղեկանք՝** եռամսյակը մեկ՝ մինչև եռամսյակին հաջորդող **ամսվա 15-ը ներառյալ**,
  - ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնողների կողմից ամսվա ընթացքում իրենց կողմից իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ և առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների կողմից ամսվա ընթացքում առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ **տեղեկություններ՝** մինչև հաջորդ **ամսվա 15-ը**,
  - գործունեության դադարեցման (այդ թվում ժամանակավոր) դեպքում՝ գրավոր **դիմում-հայտարարություն՝** մինչև **դադարեցման պահը**:
- **Պարզեցված հարկի գծով՝**
    - օրենքով սահմանված պայմաններին բավարարող անձանց կողմից տվյալ տարում կամավոր պարզեցված հարկ վճարող համարվելու համար **հայտարարագիր՝** տվյալ տարվա **հունվարի 1-ից մինչև 25-ը ներառյալ**,
    - պարզեցված հարկ վճարող համարվելու դադարեցման և ընդհանուր կարգով հարկման նպատակով գրավոր **դիմում**,
    - պարզեցված հարկի **հաշվարկ՝** յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև եռամսյակին հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ**,
  - **Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով՝**
    - անհատ ձեռնարկատերերի կողմից տարեկան եկամուտների մասին **հայտարարագիր՝** մինչև օրացուցային տարվան հաջորդող տարվա **մարտի 1-ը**,
    - գործատուների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վերաբերյալ **հաշվետվություն՝** յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվա հաջորդող **ամսվա 20-ը**,
    - վարձու աշխատողների և աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների վերաբերյալ սահմանված ձևով **տեղեկություններ՝** յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև դրան հաջորդող **ամսվա 20-ը ներառյալ**, եթե օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սոցիալական վճարները հաշվարկելու և ապահովագրության բյուջե փոխանցելու պարտականությունը դրված է վարձու աշխատողների վրա,

- **Հարկային մարմիններ ներկայացվող այլ հաշվետվություններ և տեղեկություններ**
  - Հայաստանի Հանրապետություն բենզին և դիզելային վառելիք ներմուծող իրավաբանական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) և անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության տարածքում բենզինի և դիզելային վառելիքի իրացման մասով իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի ամսական **հաշվարկ**՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ**,
  - Հայաստանի Հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրողները հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում հաստատագրված վճարի ամսական **հաշվարկ**՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ**,
  - բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողները բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային **հաշվարկ-հաշվետվությունները** (երկու օրինակից) ներկայացնում են համապատասխան լիազոր (բնապահպանական) մարմին գրանցման՝ մինչև եռամսյակին հաջորդող **ամսվա 20-ը**, իսկ տարեկան **հաշվետվությունները**՝ մինչև հաջորդ տարվա **փետրվարի 25-ը**: Գրանցված հաշվարկ-հաշվետվությունների **երկրորդ օրինակները** նշված ժամկետներին հաջորդող **5 օրվա ընթացքում** ներկայացնում են իրենց հաշվառող հարկային մարմին,
  - ՀՀ-ում գրանցված (20 և ավելի տոննա բեռնատարողությամբ) բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար ճանապարհային վճար վճարողները բեռնափոխադրումներ իրականացնելու ամսվա (ամիսների) համար յուրաքանչյուր ավտոմեքենայի մասով իրենց գրանցման վայրի հարկային մարմին են ներկայացնում հաշվարկված և վճարված վճարների մասին **հայտ**՝ (կցելով ավտոմեքենայի բեռնատարողությունը և վճարումը հավաստող փաստաթղթերի պատճենները) **մինչև առաջին բեռնափոխադրում իրականացնելու օրը**,
  - Անկախ բեռնափոխադրումների իրականացումից, յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվա 1-ը, Հայաստանի Հանրապետությունում գրանցված 20 և ավելի տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաների սեփականատեր կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագրերով բեռնատար ավտոմեքենաներ շահագործող կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք (անհատ ձեռնարկատերերը) իրենց գրանցման վայրի հարկային մարմին են ներկայացնում այդ ավտոմեքենաների վերաբերյալ **եղակետային տվյալներ**,



- հանրային ծառայությունների ոլորտում (էներգետիկայի (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգեր) բնագավառ, ջրային համակարգ (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ) կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք (որոնց համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է կարգավորվող սակագներ) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող **ամսվա 25-ը** կարգավորման պարտադիր վճարների եռամսյակային **հաշվետվությունները** ներկայացնում են իրենց հաշվառող հարկային մարմին,
- յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ **ամսվա 25-ը, տեղեկանք՝** յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) համար տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարումների, վերադարձերի և սխալմամբ գրանցված գումարների մասին,
- ՀՀ կառավարության 01.04.02թ-ի N 299 որոշմամբ հաստատված ցանկում նշված ապրանքներ արտադրողների և ներմուծող-իրացնողների կողմից նշված ապրանքների արտադրության ու շրջանառության ֆիզիկական ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ **հաշվետվություններ՝** յուրաքանչյուր եռամսյակի (կամ ամսվա՝ կախված ապրանքի տեսակից) համար՝ մինչև դրան հաջորդող **ամսվա 20-ը:**

Անկախ ներկայացման ընթացակարգից, հարկ վճարողները (պարտադիր վճար կատարողները) օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, որպես կանոն, կազմում են **ինքնուրույն և պատասխանատվություն են կրում** դրանց **լրիվության** և սահմանված **ժամկետներում ներկայացնելու համար:**

### **3.5. ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Հարկային կարգապահության հաջորդ և եզրափակիչ պայմանը հարկերը ժամանակին և ամբողջությամբ վճարելն է: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողը **պարտավոր է** ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը, հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, սահմանված կարգով կատարել նաև դրանց կանխավճարային մուծումներ:

Հարկ վճարողների կողմից հարկերը վճարվում են ՀՀ պետական (կամ) հայնքների բյուջե, հայկական դրամով:

Հարկերի և այլ պարտադիր վճարների՝ պետական բյուջե կատարվող վճարումներն իրականացվում են բանկային համակարգի միջոցով: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 20.05.2004թ «Վճարահաշվարկային գործառնությունների կատար-

ման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ սահմանված են ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից իրականացվող գործառնությունների ժամանակ կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները: Վճարահաշվարկային փաստաթղթերում (վճարման հանձնարարականներ, անդորրագրեր, վճարագրեր և այլն) սահմանված են պարտադիր և ոչ պարտադիր լրացման ենթակա վավերապայմաններ: Պետական բյուջե կատարվող վճարումները կարելի է իրականացնել վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման (անկանխիկ հաշվարկներ) և կանխիկ միջոցների փոխանցման (կանխիկ հաշվարկներ) միջոցով: ՀՀ-ից դուրս գտնվող հարկ վճարողները նույնպես կարող են կատարել վճարումներ ՀՀ պետական բյուջե հայկական բանկերի մասնաճյուղերի միջոցով, եթե այդպիսիք կան տվյալ երկրներում կամ այն բանկերի միջոցով, որոնք ունեն թղթակցող հաշիվներ հայկական բանկերում:

Վճարման հանձնարարականի **պարտադիր վավերապայմանների** թվին են դասվում.

1. վճարման հանձնարարականի համարը,
2. ներկայացման ամսաթիվը,
3. ուղարկողի անունը կամ անվանումը,
4. ստացող բանկի (մասնաճյուղի) անվանումը,
5. դեբետագրվող հաշիվը (ուղարկողի հաշվի համարը ստացող բանկում (մասնաճյուղում)),
6. շահառուի անունը կամ անվանումը (պետական բյուջե կատարվող հարկային և այլ պարտադիր վճարումների ժամանակ, որպես շահառու, կարելի է նշել «ՀՀ պետական բյուջե», իսկ համայնքների բյուջե կատարվող վճարումների ժամանակ՝ օրինակ «Շենգավիթի համայնքային բյուջե»),
7. շահառուի բանկի (մասնաճյուղի) անվանումը (պետական բյուջե կատարվող հարկային և այլ պարտադիր վճարումների ժամանակ առաջարկվում է նշել «կենտրոնական գանձապետարան»),
8. կրեդիտագրվող հաշիվը (շահառուի հաշվի համարը շահառուի բանկում (մասնաճյուղում)),
9. գումարը (թվերով և բառերով),
10. արժույթը (կողով և բառերով),
11. գործարքի նպատակը (պետական բյուջե կատարվող հարկային և այլ պարտադիր վճարումների ժամանակ ցանկալի է նշել վճարման նպատակը, հարկատեսակը և ժամանակաշրջանը, որի համար կատարվում է վճարումը (օրինակ՝ առաջարկվում է նշել «վճարվում է 2005թ. հունիս մասվա համար շահութահարկի կանխավճար», կամ «վճարվում է 2005թ. մայիսի 14-ի թիվ

15/125 ստուգման ակտի համաձայն .... դրամ ԱԱՀ-ի գումար, ..... դրամ ԱԱՀ-ի գծով հաշվարկված տուգանքի գումար, ..... դրամ ԱԱՀ-ի գծով հաշվարկված տույժի գումար»)),

12. ուղարկողի ստորագրությունը և վավերացումը կնիքով, եթե ուղարկողն իրավաբանական անձ է,
13. պետական բյուջե կատարվող հարկային և այլ պարտադիր վճարումների կատարման դեպքում ուղարկողի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

Վճարահաշվարկային փաստաթղթերում կարող են ներառվել նաև **ոչ պարտադիր** վավերապայմաններ՝ վճարման եղանակը (թղթային, էլեկտրոնային), միջնորդ բանկի (բանկերի) անվանումը, վճարման ամսաթիվը, ստացող բանկի կողմից վճարման փաստաթղթի կատարման ամսաթիվը:

Ինչպես վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման (անկանխիկ հաշվարկներ), այնպես էլ կանխիկ միջոցների փոխանցման (կանխիկ հաշվարկներ) ժամանակ, վճարողին անհրաժեշտ է ստացող բանկին տրամադրել (տեղեկացնել) անհրաժեշտ պարտադիր վավերապայմանները (կանխիկ հաշվարկների դեպքում՝ վճարողի անվանումը, ՀՎՀՀ-ն (եթե այն ունենալը պարտադիր է), գումարը, վճարման նպատակը, իսկ մյուս պարտադիր վավերապայմանները կապահովի վճարը ստացող բանկը):

Գործող օրենսդրությամբ սահմանված են հաշվարկված հարկերի և կանխավճարային մուծումների պետական և համայնքային բյուջեներ **վճարելու հետևյալ ժամկետները**.

- **շահութահարկի գծով՝**
  - շահութահարկի գումարը՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա **ապրիլի 25-ը ներառյալ**,
  - շահութահարկի կանխավճարային և նվազագույն շահութահարկի մուծումները՝ յուրաքանչյուր ամիս, տվյալ **ամսվա 25-ից ոչ ուշ**,
  - հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտների ստացած եկամտից շահութահարկի գումարը, որը վճարվում է հարկային գործակալի կողմից՝ եկամտի վճարման ամսվան հաջորդող **ամսվա 5-ից ոչ ուշ**,
  - ոչ ռեզիդենտի շահութահարկի կանխավճարները՝ մինչև հաշվետու տարվա **հուլիսի 1-ը և դեկտեմբերի 31-ը**:
- **եկամտահարկի գծով՝**
  - հարկային գործակալը պահված (գանձված) հարկը բյուջե է վճարում ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող **ամսվա 5-ից ոչ ուշ**,
  - հարկ վճարողի կողմից (անհատ ձեռնարկատերեր, ֆիզիկական անձինք), եկամտահարկի գումարը՝ մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա **մայիսի 1-ը**,

- անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտահարկի կանխավճարային և նվազագույն մուծումները՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին **ամսվա 15-ից ոչ ուշ**:
- **ակցիզային հարկի գծով՝**
  - ակցիզային հարկի գումարը, յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև դրան հաջորդող **ամսվա 15-ը**.
  - ներմուծվող ապրանքների համար՝ ներմուծման օրվանից՝ **10 օրվա ընթացքում**:
- **ավելացված արժեքի հարկի գծով՝**
  - ավելացված արժեքի հարկի գումարը՝ մինչև հաշվետու եռամսյակին (ամսվան) հաջորդող **ամսվա 20-ը ներառյալ**,
  - ներմուծվող ապրանքների համար՝ ներմուծման օրվանից **10 օրվա ընթացքում**:
- **գույքահարկի գծով՝**
  - գույքահարկի գումարը իրավաբանական անձանց կողմից վճարվում է եռամսյակը մեկ՝ մինչև եռամսյակին հաջորդող **երկրորդ ամսվա 1-ը**,
  - գույքահարկի գումարը ֆիզիկական անձանց կողմից վճարվում է մինչև հաշվետու տարվա **դեկտեմբերի 1-ը**:
- **հողի հարկի գծով՝**
  - հողի հարկի գումարը իրավաբանական անձանց կողմից վճարվում է եռամսյակը մեկ անգամ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող **ամսվա 25-ը**,
  - հողի հարկի գումարը քաղաքացիների ու գյուղացիական տնտեսությունների կողմից վճարվում է հավասար մասերով՝ ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա **նոյեմբերի 15-ը** և հաջորդ տարվա **ապրիլի 15-ը**:
- **հաստատագրված վճարների գծով՝**
  - հաստատագրված վճարի գումարը՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ **ամսվա 15-ը ներառյալ**:
- **պարզեցված հարկի գծով՝**
  - պարզեցված հարկի գումարը՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև եռամսյակին հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ**:
- **պարտադիր սույիալական ապահովագրության վճարներ**
  - գործատուները յուրաքանչյուր ամսվա համար պարտադիր սույիալական ապահովագրության վճարումներ են կատարում մինչև հաջորդ **ամսվա 20-ը ներառյալ**,
  - անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր ամսվա համար վճարում են նվազագույն սույիալական վճար՝ 5000 դրամ, մինչև հաջորդ **ամսվա 15-ը**,

իսկ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և նվազագույն սոցիալական վճարների տարբերությունը ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե են փոխանցում հաջորդ տարվա **մարտի 1-ից ոչ ուշ**:

■ **այլ պարտադիր վճարներ**

- բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողները հաշվարկված եռամսյակային վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ, իսկ տարեկան վճարները՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող երրորդ **ամսվա 1-ը**, իսկ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների Հայաստանի Հանրապետության օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար բնապահպանական վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելիս՝ վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան մաքսային մարմին,
- ՀՀ-ում գրանցված բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության ամսական վճարը վճարվում է **մինչև** տվյալ ամսում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող, տարածքից դուրս եկող կամ տարածք մուտք գործող առաջին բեռնափոխադրում **իրականացնելու օրը**,
- Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը վճարվում է ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ **ամսվա 25-ը**,
- Հայաստանի Հանրապետություն բեռզին և դիզելային վառելիք ներմուծողների կողմից իրացվող բեռզինի և դիզելային վառելիքի համար շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարը վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող **ամսվա 25-ը ներառյալ**,
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) **տրման ամսաթվից ոչ ուշ**,
- հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ վճարողները օրենքով սահմանված կարգով հաշվարկված և հաստատված կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի մեկ քա-

**ռորդի չափով վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա 30-ից ոչ ուշ:**

«Հարկ վճարողները թաքցրած կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, իչպես նաև հարկային օրենսդրության համաձայն հաշվարկված տույժերը և տուգանքները բյուջե են վճարում հարկային տեսչության կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ **10-օրյա ժամկետում**» («Հարկերի մասին» ՀՀ օրենք, 29-րդ հոդված): Հատկանշական է, որ հոդվածում նշված 10 օրվա համար որևէ տույժ չի հաշվարկվում:

Եթե հարկերի և այլ պարտադիր վճարների վճարման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վճարումը կարող է կատարվել այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, և այդ դեպքում ևս վճարումը կհամարվի ժամանակին կատարված: Հարկերի և այլ պարտադիր վճարների վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում բյուջե չվճարած հարկերի գումարները համարվում են ապառք և գանձվում տույժերի հաշվարկումով: Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անվճարումակոթյունը կարգավորող օրենսդրության համաձայն, հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու մասին դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու պահից հարկերի և այլ պարտադիր վճարների վճարումները կասեցվում են, և տույժեր չեն հաշվարկվում մինչև պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը՝ պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականության համապատասխան:

Անհրաժեշտ է իմանալ, որ Հարկային պետական ծառայության 25.07.03թ. թիվ 03/20-Ն հրամանով հաստատված՝ հարկային տեսչություններում հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի վարման առանձին հարցերի վերաբերյալ կարգի համաձայն.

- ա) անկախ նրանից, թե հարկ վճարողի հաշվից երբ է գումարը դուրս գրվել, կամ կանխիկ վճարման դեպքում համապատասխան բանկի (բաժանմունքի) դրամարկղ գումարը երբ է մուծվել, հարկային մարմնի կողմից **վճարման օր է ընդունվում այն օրը, երբ այդ գումարները մուտքագրվել են համապատասխան բյուջեի հաշվին**,
- բ) այն դեպքերում, երբ հարկ վճարողը հարկային պարտավորության գումարների վճարման ժամանակ վճարման փաստաթղթերում կոնկրետ նշում է վճարման նպատակը (հարկատեսակը և համապատասխան ժամանակաշրջանը, որին վերաբերում է հարկային պարտավորության մարումը) և այդ հարկատեսակի գծով չկատարված հարկային պարտավորություն դեռևս չունի, ապա վճարված գումարները ուղղվում են վճարման փաստաթղթերում նշված հարկային պարտավորությունների մարմանը (այդ թվում՝ հետագայում առաջացող),
- դ) հարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության բյուջեներ կատարված փաստացի վճարումների հաշվին, եթե հարկ վճարողի կողմից կոնկրետ չի նշվել, թե որ ժամանակաշրջանի կամ որ պարտավորության մարմանն է

այն վերաբերում (նպատակային չէ), հարկային մարմնի կողմից առաջնահերթ մարվում են տվյալ հարկատեսակի գծով առկա հարկային պարտավորությունները հետևյալ հերթականությամբ՝

- դատարանի վճռի համաձայն բռնագանձման ենթակա հարկային պարտավորությունները,
- 365 օրը լրացած ապառքները,
- 365 օրը չլրացած ապառքները՝ ըստ առաջապահ ժամկետների վաղեմության,
- հարկ վճարողի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկի վճարման ժամկետից շուտ ներկայացրած հաշվարկի հիման վրա գրանցված հարկի գումարները, եթե հարկ վճարողի կողմից վճարման հանձնարարագրում կոնկրետ նշված է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար վճարված լինելու հանգամանքը (բացառությամբ հարկային գործակալի կողմից պահվող եկամտահարկի և ոչ ռեզիդենտի շահութահարկի, որոնց համար վճարված գումարը չի համարվում գերավճար մինչև հաշվետու եռամսյակի համար ամփոփ հաշվարկների ներկայացումը),
- տույժերը,
- տուգանքները,

ե) հարկ վճարողի՝ կոնկրետ հարկատեսակի գծով հարկային պարտավորությունների մարումից հետո մնացած գերավճարի գումարը սահմանված կարգով հաշվանցվում է (հանվում է) այլ հարկատեսակների գծով նախ տույժերի, այնուհետև տուգանքների և վերջում՝ ապառքների պարտավորություններից՝ դրանք նշված հերթականությամբ մարելու միջոցով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված հարկատեսակների հերթականությամբ:

Հարկ վճարողներն իրավունք ունեն իրենց հաշվառման վայրի հարկային մարմնի հետ կազմել փոխադարձ հաշվարկների տեղեկանք՝ հաշվարկված և բյուջե վճարված հարկերի վերաբերյալ, բյուջեի նկատմամբ պարտքերի և գերավճարների գումարների ճշտման նպատակով:

Օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային կամ այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) ենթակա են վերադարձման կամ հաշվանցման հարկ վճարողի այլ պարտավորությունների հաշվին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

## 4.

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՒՏԵԼՈՒ ԸՆԿՆՈՒՄ

### 4.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁՄԱՆ ՈՒՂԴԱՍԾ ՄԻՋՈՑՆԵՐ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածը սահմանում է «**հարկային պարտավորություն**» եզրույթը, համաձայն որի՝ «հարկային պարտավորությունը» **ներառում է հարկերի** (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), **ինչպես նաև** հարկային օրենսդրությունը և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված **տույժերի և տուգանքների գումարների վճարումը**:

Եթե «հարկային պարտավորություն» եզրույթի սահմանումն ըստ էության բնորոշում է նաև հարկային մարմնի կողմից վերահսկվող բյուջեի այլ եկամուտների գծով պարտավորությունների էությունը, ապա նույնը չի կարելի ասել դրանց առաջացման և դադարեցման պայմանների վերաբերյալ, որոնք սահմանվում են այդ վճարատեսակների մասին համապատասխան օրենքներով: Օրինակ՝ եթե հարկային պարտավորությունը կարող է առաջանալ նաև հարկ վճարողի կողմից հարկային մարմնին ներկայացված հաշվարկի հետևանքով, ապա տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունն առաջանում է հարկ վճարողին տրված լիցենզիայի հետևանքով և կարող է դադարել նաև մինչև տարեկան պետական տուրքի հերթական վճարման ժամկետը՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հետևանքով: Սույն գրքույկում ներկայացվում են **միայն** հարկային պարտավորությունների, դրանց դադարման և գանձմանն ուղղված հարկադրանքի միջոցների վերաբերյալ հարցերը:

Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Չկատարված հարկային պարտավորությունները համարվում են **անհուսալի**, և դրանց մասով վարվում է **առանձնապես հաշվառում** հետևյալ դեպքերում՝

- ա) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների մասով, եթե այդ պարտավորությունների բռնագանձման



կատարողական վարույթներն ավարտվել են պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի գույք կամ եկամուտներ չունենալու կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով,

- բ) իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի՝ 500.0 հազար դրամը չգերազանցող հարկային պարտավորությունների մասով, եթե այդ պարտավորությունների բռնագանձման կատարողական վարույթներն ավարտվել են պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի գույք կամ եկամուտներ չունենալու կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով, եթե բացակայում են անհատ ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու հիմքերը,
- գ) անհատ ձեռնարկատիրոջ հարկային պարտավորությունների մասով՝ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի հիման վրա անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման դեպքում:

Անհուսալի դառնալուց հետո՝ **հինգ տարվա ընթացքում**, չգանձված պարտավորությունները **դադարում են և հանվում հաշվառումից**: Անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանված է ՀՀ կառավարության 11.08.05թ. թիվ 1205-Ն որոշմամբ:

Իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում չկատարված հարկային պարտավորությունը կրում է նրանց իրավահաջորդը (իրավահաջորդները):

Իրավաբանական անձի լուծարման կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վերաբերյալ որոշումներ ընդունող լիազորված մարմինները լուծարման (գործունեության դադարեցման) որոշման ընդունման մասին յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում են հարկային տեսչության մարմիններին: Իրավաբանական անձի լուծարումից հետո, հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային տեսչության ներկայացրած հայցի հիման վրա դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել այդ իրավաբանական անձի որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային տեսչությունից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով: Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային տեսչության ներկայացրած հայցի հիման վրա դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել անհատ ձեռնարկատիրոջ վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային տեսչությունից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով:

Եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշ-

ումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կուպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ ՀՀ կառավարության 18.09.98թ թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով, մասնավորապես հիմնվելով՝

- հարկ վճարողի ակտիվների,
- հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների,
- հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի,
- գույքագրման և չափագրման տվյալների,
- օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների,
- համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների,
- հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի, այդ հարկ վճարողի վաճառվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացման փաստացի գների ամրագրմանը և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտությանն ուղղված հսկիչ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաթղթավորված տվյալների վրա (հսկիչ գնումների արդյունքները կիրառվում են գործարքների չփաստաթղթավորված մասի նկատմամբ):

Եթե հարկային տեսչությունն ունի փաստեր այն մասին, որ չմարված հարկային պարտավորություններ ունեցող հարկ վճարողները վերացնում (լուծարում) են եկամուտ (շահույթ) առաջացնող իրենց օբյեկտները կամ թաքցնում են եկամուտը (շահույթը), որի հետևանքով հնարավոր չի դառնում գանձել հարկային օրենսդրությամբ սահմանված հարկերը, ապա հարկային տեսչությունը կարող է միջոցներ ձեռնարկել մինչև հաշվետու ժամանակը դրանք գանձելու ուղղությամբ: Այդ դեպքում հարկային տեսչությունը կարող է պահանջել հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված մյուս փաստաթղթերը՝ մինչև հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը:

**Անապրանք փաստաթղթեր** դուրս գրած և ձեռք բերած անձանց նկատմամբ կիրառվում է տուգանք՝ գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) փաստացի կատարումը հավաստող՝ կազմված փաստաթղթում նշված էական պայմանների (այդ թվում՝ դրանցից որևէ մեկի) 20 և ավելի տոկոս շեղման դեպքում՝ շեղման (դրամական արտահայտությամբ) 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 1 միլիոն դրամից: Նշված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկնվելու դեպքում կիրառվում է տուգանք՝ շեղման կրկնապատիկի չա-

փող: Անապրանք փաստաթղթերը հարկ վճարողների կողմից հարկերի հաշվարկման և (կամ) վճարման ենթակա հարկային պարտավորությունների նվազեցման և (կամ) հաշվանցումներ կատարելու հիմք չեն կարող հանդիսանալ:

Հարկային օրենսդրության կիրառման առումով անապրանք փաստաթուղթը հարկերի հաշվարկման և (կամ) վճարման համար հիմք հանդիսացած (հարկային հաշվառման մեջ ներառված)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին ձևականորեն համապատասխանող վճարահաշվարկային այն փաստաթուղթն է, որում նշված գործարքը (ապրանքի մատակարարում, ծառայության մատուցում կամ աշխատանքի կատարում) այդ փաստաթուղթը կազմած կողմերի միջև փաստացի չի կատարվել կամ կատարվել է այդ փաստաթղթում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով: Նշված դրույթի կիրառման առումով էականորեն տարբերվող պայմաններ են համարվում կատարված գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) տեսականին, գինը, քանակը, գումարը: Փաստաթղթերը չեն համարվում անապրանք, և նշված պատասխանատվությունը չի կիրառվում, եթե անձն ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն կրում է գործարքը կատարելու պարտավորություն:

Հարկային պարտավորությունների գծով **գումարների մուծումը** սահմանված ժամկետներից **ուշացնելու դեպքում** հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել **հայցադիմում**՝ հարկային պարտավորության **բռնագանձման** և (կամ) այն հարկ վճարողի **գույքի վրա տարածելու համար**:

Հարկերի վճարումն **ուշացնելու դեպքում** հարկային մարմինը, բացառությամբ ՀՀ կառավարության 31.07.01թ. թիվ 691 որոշմամբ սահմանված դեպքերի, հարկերի վճարման համար սահմանված ժամկետից **183 օրվա** ընթացքում, սահմանված կարգով հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու **հայցով դիմում է դատարան**: Ընդ որում, այդ հայցից հարկային մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն:

Չկատարված հարկային պարտավորության չափը **հինգ հարյուր հազար և ավելի դրամ կազմելու դեպքում** ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի հարկ վճարողի հարկային պարտավորությանը համարժեք **գույքի վրա արգելանք դնել** մինչև դատարանի կողմից վճռի կայացումը, **բացառությամբ** օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը: Արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ հարկ վճարողի բանկային հաշիվների նկատմամբ, ապա՝ հարկ վճարողի անշարժ գույքի նկատմամբ, այնուհետև՝ հարկ վճարողի այլ ակտիվների նկատմամբ: Դատարանի վճռից հետո հարկային մարմինն ապահովում է բռնագանձված գույքի իրացումը՝ ՀՀ կառավարության 11.05.02թ թիվ 520 որոշմամբ սահմանված կարգով: Հարկային մարմնի կողմից հարկ վճարողի գույքի արգելադրումից հետո՝ **30-օրյա ժամկետում** դատարանի **վճիռը չապահովելու դեպքում** հարկ վճարողի գույքը **համարվում է արգելանքից հանված**:

Որպես հարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կարող է կնքվել **գրավի պայմանագիր**՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարկային օրենսդրությունը թույլ է տալիս նաև հասարակության կողմից հսկողություն իրականացնել հարկ վճարողների հարկային կարգապահության նկատմամբ: Այսպես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի համաձայն, հարկային մարմինները ՀՀ կառավարության 27.04.06թ. թիվ 582-Ն սահմանած ձևով և կարգով, ցանկերի տեսքով հրապարակում են տեղեկատվություն՝

1) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը՝

- ա) հաշվետու տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների վերաբերյալ,
- բ) օգտակար հանածոների արդյունահանման լիցենզիա, թույլտվություն կամ արտոնագրեր ունեցող, սակայն գործունեություն չիրականացնելու մասին հայտարարություն կամ զրոյական հաշվարկ-հաշվետվություններ ներկայացրած հարկ վճարողների վերաբերյալ,
- գ) հաշվետու տարվան նախորդող և հաշվետու տարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված շահութահարկի հիսուն և հարյուր տոկոս նվազեցման արտոնությունից օգտվող օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների վերաբերյալ,
- դ) հաշվետու տարվա արդյունքներով ՀՀ պետական բյուջե 50 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների վերաբերյալ,
- ե) հաշվետու տարվա արդյունքներով ՀՀ պետական բյուջե 1.0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի և նրանց կողմից վճարված շահութահարկի մեծության վերաբերյալ,
- զ) հաշվետու տարվա արդյունքներով ՀՀ պետական բյուջե 3 մլն դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ,
- է) հաշվետու տարվա արդյունքներով պարզեցված հարկ վճարողներին պատկանող խանութների մասով ցույց տված 50.0 մլն դրամ և ավելի գումարի չափով իրացման շրջանառություն ունեցող և հաշվետու տարվա ընթացքում 15.0 մլն դրամը գերազանցող ապրանքային մնացորդ ունեցող և հարկման ընդհանուր կարգին անցած պարզեցված հարկ վճարողների վերաբերյալ.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝

- առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով, իսկ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով, տեղադրվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

## **4.2. ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆՏԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԿԱՐԳԱԿԱՆ ԵՎ ԲՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Հարկային կարգապահության խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Պատասխանատվությունն ընդհանուր կերպով կարելի է բնորոշել որպես *հարկադրական ներգործության ձև, հատուկ սանկցիաների կիրառություն, որն իրավախախտի համար առաջացնում է անշահավետ հետևանքներ, նրան հարկադրում է կատարել մինչև իրավախախտումը գորշություն չունեցող լրացուցիչ պարտավորություն և (կամ) սահմանափակում է նրա առանձին իրավունքները և (կամ) ազատությունները:*

Պատասխանատվության տեսակներն ըստ բնույթի կարելի է խմբավորել որպես **ֆինանսական, վարչական և քրեական** պատասխանատվության տեսակներ: Ֆինանսական պատասխանատվության տեսակները սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և համապատասխան վճարատեսակների մասին օրենքներով և կիրառվում են բոլոր հարկ վճարողների նկատմամբ (այդ թվում՝ իրավաբանական անձանց նկատմամբ), իսկ վարչական կամ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք (հարկ վճարողների պատասխանատու պաշտոնատար անձինք)՝ անձամբ իր կողմից և իր մեղքով կատարված խախտման համար: Վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցները ֆինանսականից տարբերվում են նաև դրանց կիրառման վարույթներով (ընթացակարգերով) և կարգավորվում են, համապատասխանաբար, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերով:

Վարչական պատասխանատվությունը կիրառվում է **վարչական տույժ** նշանակելու միջոցով, որի տեսակներից է **տուգանքը**: Հարկային և այլ պարտադիր վճարների մասին օրենսդրության բնագավառում վարչական իրավախախտումների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, որպես վարչական տույժի տեսակ, նախատեսված է միայն տուգանքը: «Վարչական տույժ» և «վարչական տուգանք» հասկացությունները **չպետք է շփոթել** հարկային և այլ պարտադիր վճարների մասին օրենսդրությամբ նախատեսված տույժերի և տուգանքների հետ: Վարչական տուգանքն ընդամենը վարչական տույժի տեսակներից մեկն է, ներառվում է «վարչական տույժ» հասկացության մեջ:

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված հիմնականում հարկային կարգապահության հետևյալ խախտումների համար.**

### **«Հոդված 165. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաև այդ գործարքների դիմաց դրամական (փողային) վճարումները Հայաստանի Հանրապետության դրամով իրականացնելու պահանջը չկատարելը, ինչպես նաև արժու-

թային հարաբերությունները կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված այլ պահանջներ չկատարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, ընդ որում՝ յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտումը համարվում է մեկ խախտում:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո, մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ընդ որում՝ յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտումը համարվում է մեկ խախտում:

Սույն հոդվածով նախատեսված իրավախախտում չի համարվում պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասությունների սահմաններում վերահսկողական նպատակներով իրականացվող՝ սույն հոդվածով նախատեսված գործողության կամ գործողությունների կատարումը:

### **Վոդված 169. ԱՊՕՐԻՆԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՄ ԶԲԱՂՎԵԼԸ**

Ապօրինի ձեռնարկատիրությանը զբաղվելը, այսինքն՝ առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելը կամ առանց լիցենզիայի պետական լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեությանը զբաղվելը կամ պետական մենաշնորհի հանդիսացող ձեռնարկատիրական գործունեությանը ապօրինի զբաղվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

Ապօրինի շահումով խաղեր կամ խաղատնային գործունեություն կազմակերպելը, այսինքն՝ առանց համապատասխան լիցենզիայի շահումով խաղերով կամ խաղատնային գործունեությանը զբաղվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդպիսի գործունեությանը զբաղվելու լիցենզիա ստանալու համար օրենքով սահմանված պետական տուրքի հնգապատիկի չափով:

Առանց համապատասխան լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը, որը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կատարվել է կրկին անգամ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

**Շոդված 169.1. ՄՁՎԱՊԱՆՎԱՆ ՄՁՎԱՈՈՒՄԸ (ԳՐԱՆՑՈՒՄԸ)  
ԽԱՆՏՈՒՄՈՎ ՎԱՐԵԼԸ, ԵՐԲ ԴԱ ՎԱՐՈՂ Է ՍՈՒՋԱՑՆԵԼ (ՍՈՒՋԱՑՐԵԼ Է)  
ՄԱՐԿԻ ԿԱՍ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ  
ՆՎԱՋԵՑՈՒՄ ԿԱՍ ՄՁՏԱՐԱՐԱԳԻՐԸ (ՔԱՏԱՈՒԹՅԱՄԲ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ՄՁՏԱՐԱՐԱԳՐԻ), ՄՁՎԱՐԿԸ  
ՍԱՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԶՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ**

